

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔ ՄԸ Ի ՆԱՓՈԼԻ

Վատիկանու պաշտօնավերնը « *Osservatore Romano* » 10-11 Ապրիլ 1933, թիվ 85 (22, 148), էջ 2, սիւն՝ 2-3, գլեց շատ ֆետարքրող ֆետուեւալ տեղեկութիւնը կու տայ.

ՆԷՍՊՈԼՍԻ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՁ

Նեապոլիս, Ապրիլ. — Այս օրերուս մէջ, Ս. Գրիգորի Հայոց պատմական ու հոյակապ վանքը՝ նաեւ Ս. Լիկուորոյ՝ կոչուած, իր զեղարուեստական բոլոր մեծագին հարստութեամբ, խաչելեալ Երկրպագու՝ Քոյրերու հաստատութեան յանձնուեցաւ. որոնց գլխաւոր կեդրոնը՝ Գրեմոնա քաղաքին, Ս. Գրիգոր (եկեղեցւոյն) մէջ կը գտնուի: Արդէն տասնեակ մը տարիներէ ի վեր, Սերաֆինի՝ Բենեդիկտեան Գերարգոյ Արքայն, որ այն ատեն Միսից Ս. Ժողովի Քարտուղարն էր, իր անձնական այցելութեան մ'առթիւ (Մայիս 1923), տրամադրած էր, որ խնդրական վանքը, « իր բոլոր ժամանակաւոր գոյքերով, ինչպէս իր ամբողջ իրաւունքներովն ու պարտականութիւններովն հանդերձ, վերը յիշուած խաչելեալ Քոյրերու կրօնաւորական միաբանութեան յանձնուէր: Եւ որպէսզի Բենեդիկտեան այդ դարաւոր վանքին և իր սրբոյն՝ յաղթող Նահատակին և Հայ Եպիսկոպոսին յիշատակը մշտնջենապէս մնայ, նոյն Միաբանութիւնը Ս. Բենեդիկտոս Արքային յատուկ պաշտպանութեան ենթարկուի »:

Խաչելեալ Քոյրերը, պատկան իշխանութեանց միջամտութեամբ, ստանձնեցին՝ ոչ միայն շէնքերը, այլ նաեւ ամբողջ սրբազան սպասները:

Խաչելեալ Երկրպագու Քոյրեր, Աղիւս Աստուծոյ Մարիամ Բիա Նողարի խա-

չեանէն՝ հաստատուելէն վերջ, Նախախնամութեան մասնաւոր ակնարկով մը, արդէն 1922 էն ի վեր՝ պատմական մեհաստանին մէջ մուտք գտած էին: Ազնուատոհմ Յուլիա Գարաւիգա Սիրինեանոյ Արքասուհին, 1930ի Յունուարին վախճանելու միջոցին՝ զիրենք փափաքած էր. սա, Բենեդիկտեանց կարգին Ս. Գրիգոր Հայոց (վանքին) յետին Արքասուհին եղաւ, և զրեթէ յետին վանականը: Ազնուական ու բարեպաշտ Արքասուհին տեսնելով հասարակութիւնը սակաւաթիւ մայրապետներու վերածուած, միանգամայն՝ ուրիշ միաբանութեան մը կողմէ օգնութեան հարկն զգալով, որով կարելի ըլլար հոյակապ տաճարին պաշտաման հոգ տանիլ և աստուածային ժամբարանութիւնները շարունակել. և, միեւնոյն ատեն, որպէս զի կարենար իր կրօնակից քոյրերուն եղբայրասէր զօրավիգն հանդիսանալ, ջերմեռանդ աղօթքներ բարձրացուց առ Աստուած, որպէսզի երկնաւոր կամքն իրեն յայտնուէր: Սիրինեանոյ բարեպաշտ Արքասուհին, հազիւ խաչելեալ Քոյրերուն հանդիպեցաւ, համարեցաւ զանոնք Աստուծմէ իրեն զրկուած. որով առաջին օրէն իսկ իրենց հետ սուրբ և սերտ մտերմութեամբ կապուեցաւ, որ մօտ տասը տարի, ցորչափ ապրեցաւ, երբեք չմեղկացաւ:

Հոն՝ ուր այժմ Բենեդիկտեան՝ հոյա-

1. S. Liguoro, Թերես Ս. Գրիգոր հայկական անուանակոչութեան աղաւաղ ձեւն ըլլայ:

2. Suore Crocefisse Adoratrici.

3. Serva di Dio Maria Pia della Croce Notari.

4. Շատ դիւրաւ « Բենեդիկտեան » անունը կը դրոշմէ հայկական վանքին վրայ ու կ'անցնի յօղուածագիրը. սակայն ով գիտէ թէ ո՞ր Հայ բարեպաշտ իշխանը շէնել տուած է զայն: Օտար մը երբեք վոյթ պիտի չընէր միշտ Ս. Գրիգոր Հայոց անուամբ կոչելու իր կատուցած վանքը: Զուտ հայկական հաստատութիւն է: